ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կիպրոսի Հանրապետության կառավարությունը,

ցանկանալով ընդլայնել երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունները, հիմնվելով իրավահավասարության և փոխշահավետության սկզբունքի վրա և

ընդունելով զբոսաշրջության զարգացման կարևորությունը տնտեսական հարաբերությունների համար,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, մասնավորապես, կամրապնդեն և կընդլայնեն երկու երկրների միջև համագործակցությունը զբոսաշրջության բանգավառում՝ հանուն երկու ժողովուրդների կյանքի, պատմության և մշակույթի փոխիմացության, ինչպես նաև ի շահ տնտեսական փոխադարձ կապերի զարգացման:

Սույն Համաձայնագրին համապատասխան՝ սահմանված համագործակցությունը իրականացվում է Կողմերի համապատասխան օրենսդրությամբ և, մասնավորապես, բյուջեի թույլատրելի սահմաններում:

Հոդված 2

Կողմերը, իրենց օրենսդրությանը և կանոնակարգերին համապատասխան, կդյուրացնեն ճամփորդական ընթացակարգերը՝ նպատակ ունենալով ամրապնդելու երկու երկրների միջև զբոսաշրջային երթևեկությունը:

Հոդված 3

Կողմերը հատուկ ուշադրություն են դարձնում իրենց երկրների միջև զբոսաշրջության զարգացմանը՝ մասնավորապես կազմակերպված և ոչ կազմակերպված զբոսաշրջության, թեմատիկ

մասնագիտացված ճանապարհորդական խմբերի միջև, ինչպիսին են կոնգրեսները, համաժողովները, ցուցահանդեսները, մարզական միջոցառումները, երաժշտական և թատերական փառատոները:

Հոդված 4

Կողմերը սերտ կհամագործակցեն իրենց գերատեսչությունների և զբոսաշրջային կազմակերպությունների, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը մասնակից այլ կազմակերպությունների հետ:

Հոդված 5

Կողմերը բարյացակամորեն կվերաբերվեն զբոսաշրջային տեղեկատվության տարածմանը, որպեսզի ամրապնդեն զբոսաշրջային երթևեկությունը, մասնավորապես, հրապարակումների, տեղեկատվության և գովազդի, տպագիր նյութերի, ֆիլմերի և ցուցահանդեսների փոխանակումը:

Հոդված 6

Կողմերը միջոցներ են ձեռնարկում միմյանց օգնելու հյուրանոցային աշխատակազմի և զբոսաշրջության ոլորտի աշխատողների ուսուցման և վերապատրաստման գործում, ինչպես նաև խրախուսում են, որ զբոսաշրջության զարգացման հեռանկարների և ծրագրերի մշակման և դրանց իրագործման հետ կապ ունեցող թե հասարակական և թե մասնավոր կազմակերպությունները կարողանան միմյանց հետ կնքել համաձայնագրեր:

Հոդված 7

Կողմերը ջանքեր կգործադրեն հետագա համագործակցությունը զարգացնելու համար իրենց համապատասխան գերատեսչությունների միջև՝ զբոսաշրջության միջազգային կազմակերպություններում, և կփոխանակեն այդ ոլորտում իրենց ձեռքբերումների հետ կապված տեղեկությունը:

Հոդված 8

Կողմերը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն, որ երկու երկրների զբոսաշրջության բնագավառի

համապատասխան գերատեսչությունները և կազմակերպությունները կարողանան իրականացնել զբոսաշրջության վերաբերյալ տեղեկության, փորձի, տվյալների և այլ փաստաթղթերի փոխանակում՝ իրենց իրավասության շրջանակում:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման և կատարման առնչությամբ ծագած վեճերը հնարավորության սահմաններում լուծվում են բանակցությունների միջոցով:

Եթե նման վեճերը չեն լուծվում բանակցությունների սկսման պահից հետո երեք ամսվա ընթացքում, ապա Կողմերը կարող են վեճը լուծել՝ դիմելով միջնորդ դատարանին կամ դատավորին:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին միմյանց վերջին ծանուցման օրը:

Սույն Համաձայնագիրը կգործի 5 տարի ժամկետով:

Նշված ժամկետը լրանալուց հետո սույն Համաձայնագիրն ինքնաբերաբար կնորացվի ևս 5 տարի ժամկետով, եթե այդ ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին գրավոր չտեղեկացնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Նիկոսիա քաղաքում 1995 թվականի հունվարի 18-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1995 թվականի հունվարի 18-ից: